

միայն դաւանի (երզնցողի) զերգս մի-
տոյն. եւ ասաց (մի դասն) շարական Վար-
դավառի հարցին եւ միւս դասն ոչ կարաց
փոխել զնա. եւ փոխեցին բազում շարա-
կանս, եւ զայն եւս ոչ գիտէին: Ապա հայրա-
պետն Ներսէս հաւանութեամբ ամենայն ժո-
ղովոյն ընտրեաց զվիտանին եւ զօգտա-
կարն, զի յամենայն եկեղեցիս ամենայն օր
մի պաշտօն լիցի ըստ աւուրն խոջհրոյ. եւ
ընտրեցին արս իմաստունս, զի շրջեցին ընդ
ամենայն աշխարհս Հայոց եւ զնոյն կարգա-
ւորութիւն հաստատեցեն, որ է մինչեւ
ցայսօր» (էջ 34—35 տպ. Վենետ. համեմա-
տուած Վիեննայի Թ. 574 ձեռագրին հետ):

Պատմագիրներուս վկայութիւնքը կա-
րելի է միաբանել յայնմ, թէ Վարդավառի
տօնը աշխարհափոքով բազմութեամբ է Բա-
ղուան տօնելու առթիւ կայացած է ժողով
Այլակերպութեան տօնը պաշտօնապէս հայ
Տօնացոյցի մէջ ընդունելու համար: Այս
պատեհութեամբ առաջարկած են զանազան
երգիչներ զանազան ձայներու վրայ յար-
մարցուած շարականներ (յանուանէ՛ շար-
ցեր): Ապա Ներսէս կաթողիկոս ինքնին կամ
Բարսեղ ձոնի կատարած են անոնցմէ ընտրու-
թիւն: Բարսեղ ձոնի անունը չի տար Կիրա-
կոս. ուրիշ կողմէ ալ անծանօթ է իր անձ-
նաւորութիւնը:

Վարդավառի տօնը քրիստոնէութեան
հետ ընկալեալ տօն մըն էր արդէն եւ առ այս
հարկ չկար ժողով ընել: Բայց Վարդավառի
Կիրակիին Այլակերպութիւնը տօնելու հա-
մար հարկ էր ժողովի կարծիքն կամ հաւա-
նութիւնն առնել: Արուստ անձանօթ է, թէ
ԺԳ. դարու պատմագիրները Վարդան եւ Կի-
րակոս ուսկի՛ց քաղած են այս տեղեկու-
թիւնները:

Հետաքրքրական էր գիտնալ, թէ ինչ ա-
նունով յորջորջուած էր այս տօնը, տօնին
մուս գտած ժամանակ Հայոց քով:

Յոյները կ'անուանեն զայն Μεταμόρφωσις
τοῦ Κυρίου Հոռոմայեցիք՝ Transfiguratio Domini
որոնք առնուած են Մատթ. ԺԷ. 2. «այլա-
կերպեցաւ առաջի նոցա եւ լուսաւորեցան
երեսք նորա» եւ Մարկ. Թ. 1 «այլակերպս
եղեւ առաջի նոցա» տեղիքներէն. այսպէս
կը կոչուի նաեւ Հայոց քով. «Այլակերպու-
թիւն Տեառն»: Բառս «այլակերպութիւն» այս
իմաստով գոյութիւն չունէր Դասական գրա-

կանութիւն մէջ³⁰. կը հանդիպինք բառիս ա-
ռաջին անգամ Ը. դարու առաջին քառորդին
Թարգմանուած Դիոնեսիոս Արիսպագացոյ
Յաղագս աստուածային անուանց գործին
մէջ. «իայլուն ճաճանչիւք ճառագայթեալ ի
մեղ, որպէս յաշակերտան յայնմ աստուածա-
յին աւուր այլակերպութեան» (ՆՀԲ):

Մովսէս Խորենացոյ ընծայուած Վար-
դավառի ճառին մէջ տօնս կ'անուանուի
«Պայծառակերպութիւն»՝ «Յոյնն զսա Պայ-
ծառակերպութեան եւ Պսակաց կոչէ տօն».
«Յիրաւի Վարդավառ զսա ձայնէ Եկեղեցի
եւ Պայծառակերպութեան եւ Պսակաց տօն»:
Յոյները սակայն ոչ Պայծառակերպութիւն
եւ ոչ ալ Պսակաց տօն կ'անուանեն տօնս:
Հայոց Եկեղեցին թէ այսպիսի անուններով
կոչած ըլլայ, այլուստ չունինք վկայութիւն:
Բառս «Պայծառակերպութիւն» յօրինած է
ինքն այդ ճառին հեղինակը:

Հայոց Յայտմաւորքը, որ Աւգոստոս Զ.
գետեզած է տօնս համաձայն Յունաց, թէ
Պայծառակերպութիւն եւ թէ Այլակերպու-
թիւն կը գործածէ այսպէս. «Տօն Պայծառա-
կերպութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի
Թափորական լերինն» եւ «Տօն Այլակերպու-
թեանն Քրիստոսի ի Թափոր լերինն»: Փէշ-
տիմալձեանի Կ. Պուլիս 1834ի հրատարակած
Յայտմաւորքի մէջ մուտ գտած է նաեւ «Տօն
է Փոխակերպութեանն Քրիստոսի Աստուծոյ
մերոյ³¹»:

Յայտմաւորքը ճշգիւ նկատած է թէ Այ-
լակերպութեան տօնը կ'իյնար «քառասուն
աւուրքը յառաջ քան զԱւագ Ուրբաթն... եւ
պատահի պատկեր աւուր տօնիս յառաջին
կիրակէն Աղուհացիցն: Այլ զի ասաց Քրիս-
տոս աշակերտացն մինչ իջանէին ի լեռնէն,
թէ Մի ումեք ասիցէք զտեսիլդ մինչեւ որդի
մարդոյ ի մեռելոց յարիցէ, վասն այնորիկ
ոչ կարգեցին ի նմին աւուր, այլ յետ Պենտա-
կոստէին սասճանեցին յիսուն օր պահել, եւ
ապա զկիրակէն տօնել զտօն Վարդավառին,
որպէս առնեն եկեղեցիք Հայաստանեայց:

³⁰ Դասականաց քով «այլակերպութիւն» կը գոր-
ծածուի «տարբերութիւն» իմաստով. «այլակերպու-
թիւն ի բնութիւն մուծանել». Սերբեր. 10. «չգոյր ի
միջի նոցա այլակերպութիւն». Եւսեր. Քրոն. Ա. 114:
Հմմտ. նաեւ Ոսկ. Պաղ. Ա. էջ 36 եւ Իմաստ. Է. 20:
³¹ Հմմտ. Le Synaxaire arménien, էջ 841—
843: — Բառս «փոխակերպութիւն» առաջին անգամ
(ըստ ՆՀԲի) կը գործածուի Յովհ. Դամասկացոյ
գրութեանց Թարգմանութեան (ԺԳ. դար) մէջ. «Վասն
աստուածային փոխակերպութեան՝ մի աւետարանիչն
զինի ութ աւուր ասէ, եւ միւսն վեց աւուր»:

Զի յայտմ աւուր փոխեցին առաքեալքն զհին
քահանայութիւնն ի նորս եւ ձեռնադրեցին
զՅակորոս եղբայր Տեառն առաջին եպիսկո-
պոս յերուսաղէմ, եւ մատոյց զառաջին հո-
գեւոր պատնարազն զմարմինն եւ զարիւնն
Քրիստոսի, եւ տեսին առաքեալքն զՀոգին
սուրբ իջեալ ի պատարազն, եւ օրհնեցին աղ,
որպէս ասէ սուրբն Յոստոս, որ երրորդ
եպիսկոպոս էր Հոռոմայ»:

Յայտմաւորքիս հեղինակը (Կիր. Արե-
ւելցի) աչքի առաջ ունեցած է Մովսէս Խո-
րենացոյ ընծայուած ճառը եւ Յուստոս Ա.
երուսաղեմացոյ ընծայուած յերիւրածոյ
Թուղթը, որուն պիտի անդրադառնամ ի
վերջ գրութեանս առանձին յօդուածով մը:

Առաջին յիշատակութիւնը Այլակերպու-
թեան տօնին կը գտնենք «Հարցմունք հայ-
րապետին Անտիոքայ ընդ Խոսրով Հայոց
վարդապետ յաղագս զԾնունդն առնելոյ»
գրութեան մէջ³², որ Ը. դարու առաջին
քառորդէն է: Կըսուի հոս. «Եւ դարձեալ
Այլակերպութիւն Փրկչին՝ յաւուր Յարու-
թեան նորա (այս ինքն Կիրակի օր մը) կար-
գեցաւ եւ Գալուստն» (էջ 191): Կր գրէ զար-
ձեալ, թէ շատ մը տօներ, որոնք տօնելի են,
ուղղակի Առաքեալներէ հաստատուած չեն.
այսպէս անոնք «զՄկրտութիւնն ոչ կարդե-
ցին եւ ոչ զՊենտեկոստէն եւ ոչ զԱւետիսն
եւ ոչ զՔառասնորդան Տեառն մերոյ եւ ոչ
զՎերանալն եւ ոչ զԱյլակերպութիւնն եւ ոչ
զԲարեբանեալն օրն եւ զՅարութիւնն Ղազա-
րու եւ զՍաչին օրն» (էջ 192): Այս իմաս-
տով կ'ըսուի նաեւ Ստեփանոս Միւնեցոյ
ընծայուած առ եպիսկոպոսն Անտիոքայ պա-
տասխանի Թուղթին մէջ³³. «Մեք գտէրու-
նական տօնս ի միում աւուր տօնեմք, որպէս
ի Ծնունդն՝ զՄկրտութիւնն. եւ եթէ ի Կի-
րակէ զիսկ՝ ապա եւ զՅարութիւնն. եւ չէ
ինչ հակառակ միմեանց, զի տէրունական
տօնք են, որպէս եւ Այլակերպութիւնն
Փրկչին Յարութեանն հանդիպեցաւ եւ ի
նմին միում աւուր տօնեմք»:

Թէ Պենտալոստէից է. Կիրակին Առա-
քելոց պահէն ետքը կը տօնուէր, կը վկայէր
Մովսէս Քերզոզի ճառը (էջ 335), ինչպէս
տեսանք վերագոյն:

Այս տօնը Յոյները, Հոռոմայեցիք, Նես-
տորական եւ Յակորիկ Ասորիները կը տօնեն

³² Հրո. Գ. Վ. Յովսէփեան, Խոսրովի Թարգ-
մանիչ, Վաղարշապատ 1899 (Բ. Մաս) էջ 187—197:
³³ Գերբ Թղթոց, էջ 327:

իրբեւ անշարժ տօն օգոստոս 6ին: Միայն
Պարսկաստանի միաբնեայ Ասորիները եւ
Հայերը բացառութիւն կազմելով կը տօնա-
խմբեն զայն յետ Պենտալոստէից է. Կիրա-
կին: Այս կէտը կը ստիպէ զմեզ ըսել, թէ
Այլակերպութեան տօնը մուտ գտած է մեր
քով Պարսկաստանի միաբնեայ Ասորիներու
միջնորդութեամբ:

Այս օրուան ընտրութիւնը բնականաբար
աւելի պատշաճ էր, տօնին աւելի հանդիսա-
կան նկարագիր տալու համար: Առաքելական
Քառասնօրեայ պահքը կը վերջանար եւ կը
յաջորդէր իրբեւ պսակ Այլակերպութեան
տօնը:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

**ԹՈՒՂԹ ՅՈՒՍՏՈՍԻ Ը. ԵՐՈՒՍԵՂԵ-
ՄԸՅԻՈՅ ՅԸՂԸԳՍ ՆՈՐԸՆԾԸՅ ՊԸՏԸ-
ՐԸԳԻՆ Ի ՎԸՐԳԸՎԸՌԻ ՏՕՆԻՆ ԵՒ
ԸՂ ՕՐՀՆԵԼՈՅ**

Յուստոս, զոր Հայերը տառադարձու-
ցած են Յոստոս, այսպէս Եւսեբեայ Եկեղ.
Պատմ. Գ. 35 եւ Գ. 5, հաւանօրէն ասորա-
կան Ἰδοῦθոս գրչութենէն, Երուսաղէմի հա-
մանուն եպիսկոպոսներէն առաջինն է, յա-
ջորդած նոյն աթոռին վրայ յետ Յակորոսի
եղբոր Տեառն եւ Շմաւոնի իրբեւ երրորդ
եպիսկոպոս (Եւս. Եկեղ. Պատմ. Գ. 35).
բայց հայ գրականութեան մէջ ներկայացուած
է չորրորդ. սխալը ծագած է առանց տարա-
կուսի Գ եւ Դ գրերու չփոթութենէն. իսկ
«թուղթ»իս մէջ անգամ մը համարուած է
«երկրորդ յաջորդեալ ի Յակորայ եւ ի Շմա-
ւոնէ», զոր պէտք է կարդալ իրբեւ սխալա-
գրութիւն՝ երրորդ, ինչպէս ունի ճշգիւ
Յայտմաւորքը (Ա. Արաց):

Եւսեբիոս Կեսարացի չի գիտեր իր կեան-
քէն եւ գործունէութենէն որ եւ է նշմար,
ուստի նաեւ «թուղթ»իս մասին չունի որ եւ է
յիշատակութիւն: Այս պատճառաւ ալ հարկ
է կասկածով մերձեալ գրութեանս: Այս
կասկածը կ'ամբարցնէ ինքնին բնագիրը, որ
կը սկսի. «Այսպէս, ասէ, ուսուցին մեզ ա-
ռաքեալքն»: Զայս նկատի առնելով. Հ. Բ.
Սարգիսեան, «ակներեւ կը տեսնուի, կ'ըսէ,
թէ գրուածս նոյնութեամբ Յուստոսին չէ,
այլ անոր մէկ վկայութեան վրայ ետքէն յե-

ընդունած¹», ուստի եւ «գրուածս անվաւեր ըլլալու բնոյթ ունի. սակայն շատ հին է, մանաւանդ թէ հաւանական է, որ վաւերական յիշատակարան մը անոր իբրեւ հիմն ծառայած ըլլայ: Ասոր կողմէն է՝ ըստ իս Օրհնութիւնաբեր Յուցակի կարգաւորութիւնն²»:

Այն պարագան, որ յիշեալ Յուցակը կը յիշէ գրուածքս, թոյլ կու տայ զայն «հին» նկատելու, բայց ոչ «չատ հին» եւ ոչ ալ անոր «հիմն» «վաւերական յիշատակարան մը» ենթադրել: Չկայ որ եւ է կողմէն առ այս: Գրուածքս ու ժամանակի յերկրանք մըն է. անոր խմբագիրը, որ «Յովհաննէս Ոսկերեւանէ» կոչում յառաջ կը բերէ, չի կրնար Ի. գարէ յառաջ ըլլալ: Նա ծանօթ է «Վարդավառի տօնին», տօն մը, որ զուտ հայկական է: Եթէ այդ տօնով Այլակերպութեան տօնը նկատի ունի, զայն Երուսաղեմացիք կը տօնէին Օգոստոս Եփն, որ ժամանակով չէր կրնար նոյնանալ Հայոց Վարդավառի տօնին: Իր կարգին Աղօրհնէքը եթէ հաստատուած էր Երուսաղէմ, պէտք է ունենային զայն նաեւ Յոյներն եւ Ասորիք. ուստի եւ տեղիք պիտի չունենային անոնք ամբաստանելու Հայերը իրենց «աղօրհնէքի» եւ «Մատաղի» սովորութիւններու համար:

Գրուածքս անվաւերական մըն է, յերկրուած հայ հողին վրայ, հաւանօրէն Բ. դարու երկրորդ կէսին, Վարդավառի տօնին ընկալեալ աղի եւ մատաղի օրհնութիւնն ջատագովելու համար ընդդէմ Յունաց եւ Ասորաց:

Աղօրհնէքը գիտէ Յովհաննէս Օձնեցի³ Բ. դարու առաջին կէսին. զոր կը համարի Գրիգոր Լուսաւորչէն կարգաւորուած (նկատի ունի Սահակի ընծայուած Կանոնաց Ազգայի Սահմանադրութիւնը). չի գիտեր տակաւին Յուստոսի Թուղթը: Բայց ծանօթ է այս թուղթը կեղծ Մովսէս Խորենացու իր Վարդավառի ճառին մէջ, ուր կը յիշէ «առաքելաւորման նորընծայ պատարագաց աղին օրհնութիւնն» (էջ 336): Այս

ճառը առ կանոնի Ժ. դարուն յօրինուած է: Այս դարէն կ'երեւայ նաեւ Օրհնութիւնաբեր Յուցակին խմբագրութիւնը, ուր կը յիշուի թուղթս առաջին անգամ յանուանէ. այսպէս. «ՉՏեառնականի եւ զԱղօրհնէքն Ս. Յոստոս արար, որ էր չորրորդ եպիսկոպոս Երուսաղէմի ի սրբոյն Յակոբայ»⁴: Պօղոս Տարօնեցի կը գրէ. «Հայք զԱղօրհնէքն... ընկալան ի սուրբ հայրապետէն Հռոմայ Աստուծոյ պատարագ եւ ընծայ մատուցին եւ կերան»⁵: Այս «սուրբ հայրապետն Հռոմայ» անշուշտ Յուստոս Երուսաղէմի հայրապետն է: Այս շիթութիւնը տեսանք նաեւ վերագոյն (էջ 393) Կիրակոս Արեւելցւոյ Յայսմաւուրքին մէջ, ուր ամբողջ պարբերութիւն մը յառաջ կը բերուէր այս անվաւերականէն եւ կ'աւարտէր. «եւ օրհնեցին ալ, որպէս ասէ սուրբն Յոստոս, որ երրորդ եպիսկոպոս էր Հռոմայ»: Իսկ Կիրակոս Գանձակեցի ուրիշ անվաւերականի մը վրայ յեցած կը պատմէ. «Սուրբն Գրիգոր եւ Սեղբեստրոս աղ օրհնեցին. եւ ասէ սուրբն Գրիգոր ցՀրեայսն... անասնոցն, որք մատչին պատարագ Աստուծոյ կամ նուէր սրբոց կամ յիշատակ ննջեցելոց, առանց օրհնութեան աղի իբրեւ զոհ հեթանոսաց է»⁶: Կիրակոսի ազդեցութեան տակ է Ստեփանոս Օրպելեան, որ իր Հակաճառութեան մէջ կը գրէ⁷. «Իսկ վասն անասնոց սահմանեցին օրհնութիւն աղի, զի եւ նոքա մի զրկիցին ի նուիրմանէն Աստուծոյ. այլ եւ ի պէտս պատարագաց ընծայիցին մատաղ Տեառն եւ բաշխեցին ի քաղցեալս եւ յաղքատս: Չոր եւ Յակովբոս եղբայր Տեառն, որ էր առաջին պատրիարկ յԵրուսաղէմ՝ արար զօրհնութիւնն աղի ի տօնի Վարդավառին յԱնտիօք մայրաքաղաքի. ուր եւ սեղան կանգնեալ եւ զառաջին պատարագն արարեալ ի նմին աւուր. եւ զքրիստոնէութեան անունն հաստատեալ. եւ զայս ցուցանէր երանելին Յոստոս, որմի էր յեթնամանիցն: Իսկ յետ ժամանակաց գրեթէ երեք հարիւր ամաց, յորժամ զնաց սուրբ Լուսաւորչին

¹ Հայրապատում, Բ. էջ 189:
² Թուղթ առ Թէոփիստէ, Կ. Պոլիս 1752, էջ 306: Այս գրուածքին քաղած է Պօղոս նաեւ աղբիւրս. «Իսկ ի նորումս այսպէս ասէ Գիբն, թէ Յակոբոս եղբայր Տեառն նա միայն իշխէր մտանել ի սրբութիւն սրբութեանցն». անդ էջ 178:
³ Կիր. Գանձակեցի, Պատմութիւն, էջ 7 տպ. վեներտիկ: «Հրեցից» յիշատակութիւնը ենթադրելի էր տայ, թէ զրոյցս իրեն հիմ ունի Սեղբեստրոսի վարքը:
⁴ Կ. Պոլիս 1756, էջ 135—137:

¹ Սարգիսեան, Յուցակ, Բ. էջ 392:
² Անդ, էջ 1135:
³ Կանոնք Բ. «Արժան է եւ զհացն անխմոր եւ զգինին անապակ հանել ի սուրբ սեղանն... զի սուրբ Լուսաւորչին յօրինականէն բերեալ զայս՝ առաքելաբար հրաման ետ կատարել իւրոց վիճակելոցն, որպէս եւ զԱղի օրհնութեան յաղագացն զենմունս խառնել եւ ըստ կարգի Ղեւտացւոցն ազգաւ սեպհականել զեկեղեցւոյ շնորհ»: Մատենադրութիւնք, Վեներ. 1833, էջ 25—26:

Գրիգոր ի Հոռմ հանդերձ Տրդատաւ առ աստուածապաւին Կոստանդիանոս, յայնժամ սուրբն Սեղբեստրոս եւ Գրիգոր այլօք եպիսկոպոսօք նորոգեցին զօրհնութիւնն աղին որպէս առաքելաւանդ պատուէր, զի յոր ինչ խառնեցի, սրբեցէ ի հեթանոսական պղծութեանցն. եւ կարգեցին զայս ընդ ամենայն աշխարհ: ՉՏեառնական եւ զԱզարն ո՞ սահմանեաց, որ է Հոգէհանգիստն: Ո՞չ ապաքէն հայրապետն հետեւօղք առաքելոցն: Չորոց զկանոնեալ օրհնութիւնս աղի թարգմանեաց երանելին Սահակ հայրապետն մեր եւ Մեսրոպը»: Գրիգոր Տարեւացի կը բաւականանայ յառաջ բերել Օրհնութիւնաբեր Յուցակին սողերը⁸:

Ձեռագիր՝

Ունիմ ձեռքիս տակ Վիեննայի Թ. 3 հնագիր ձառնը, ուր (Թղ. 248բ—249բ) ամբողջութեամբ գետեղուած է գրուածքս (W)⁹: Ունի զայն նաեւ Վենետիկի Մխիթարեանց Թ. 303, Թղ. 305ա—306բ, որ ձառնարկ մըն է գրուած 1220ին (V)¹⁰: Կայ հոն երկրորդ օրինակ մ'ալ Թ. 225, Թղ. 9բ—10ա, զոր օրինակած է Հ. Ներսէս Սարգիսեան 1852ին, Կարնոյ անթուական բոլորգիր ձառնարկին (K)¹¹: Կը յիշուի չորրորդ օրինակ մ'ալ Երուսաղէմի Թ. 1365 ձեռագրին մէջ, որ ԺԳ. դարէն է կ'ըսուի¹²: Հոս խորագիրն եւ սկզբնաւորութիւնն է. «Յոստոսի, որ էր Գ. եպիսկոպոս Երուսաղէմի: Ի ձեռն Յակովբայ Եղբայր Տեառն լուեաց քահանայութիւնն Ղեւտական...»: Հ. Գ. Չարբանալեան յիշած է գրուածքս հետեւեալ խորագրով¹³. «Յուստոսի Երուսաղէմի եպիսկոպոսի յաղագս նորընծայ պատարագին որ ի Վարդավառին տաւնի. եւ յաղագս Աղաւրհնեաց». սկզբնաւորութիւնն է. «Այսպէս, ասէ, ուսուցին մեզ առաքելաբն»: Ինձ կը թուի թէ խորագիրս վերակազմուած է V եւ K ձեռագիրներու բաղաւորութեամբ: Այս V եւ K ձեռագիրներէ ըն-

դարձակ յառաջբերութիւններ տուած է Հ. Բ. Սարգիսեան իւր Յուցակին մէջ (S), զորոնք նկատի պիտի առնեմ V եւ K համապատասխանութեամբ:

ԹՈՒՂԹ՝ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՅՈՍՏՈՍԻ, ԵՐՐՈՐԴ ԵՅՏ ՅԱԿՈԲՈՅ ԵՂԲԱՅԻՐ ՏԵԱՐՆ ԿԱՅԵԱԼ ԵՊԻՍԿՈՍՍ ԵՆՐՈՒՍԱԳԵՄ, ՅԱՂԱԳՍ ՆՈՐԸՆԾԱՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ՎԱՐԴԱՎԱՐԻ ՏԱՆԻՆ ԵՒ ԱՂԱՒԻ ՀՆԵԼՈՅ

Այսպէս, ասէ, ուսուցին մեզ առաքելաբն Տեառն յաղագս Վարդավառի տաւնին, որ է Տաղաւարահարք ըստ Մովսէսի, Եթէ յայտ տաւնի փոխէին զքահանայքն ի հոռմն ըստ դասակարգութեանն, յորում մտանէր 5 քահանայն ի սրբութիւն սրբութեանցն: Արդ Յակովբոս եղբայրն Տեառն առնու ըստ ոճոյն Արիայ եւ Չարբիայ ի նա հասեալ: Չի ցայն վայր ոչ եւս գիտէին զնոր քահանայութիւնս, այլ հնոյն վարէին: Ապա հրամանաւորաւ ի 10 Հոգւոյն սրբոյ առաքելոցն՝ փոխել զհինն ի նորս եւ փոխանակ Ղեւտական քահանայութեանն՝ Քրիստոսի քահանայութիւնս:

Նոյնպէս հրաման առեալ սուրբ առաքելաբն ի Հոգւոյն սրբոյ, (զի) ի նոյն տաւն 15 առեալ զուարակս եւ նոխազս եւ գառինս՝ յաղեցցին աղիւ աւրհնութեամբ, կարդալով ի վերայ նորա զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին սուրբ, ըստ Հնոյ Կտակին որ ասէ, թէ Յամենայն զոհս ձեր աղ աւրհնութեան խառնեցցի եւ աղ մատուցի յընծայս ձեր: Քանզի ա՛ռ մարմին Քրիստոս ի հողոյ եւ փոխեաց զհաւատացեալս յիւր բնութիւնն աղիւն սրբութեան: Եւ հաստատեցաւ մեզ աղն ի բժշկութիւն եթէ նեխութեան եւ եթէ մեծ 25 զաց մերոց: Չի յորժամ կամեցի աւձն մեր-

Խորագիրը K երանելոյն Յուստոսի Երուսաղէմի եպիսկոպոսի, որ չորրորդ էր Յակոբայ եղբոր Տեառն, յաղագս տօնի Վարդավառի ասացին: V թուղթ երանելոյն Յոստոսի չորրորդ յետ Յակոբոս եղբայրն Տեառն կացեալ եպիսկոպոս յԵրուսաղէմ, յաղագս նորընծայ պատարագին Քրիստոսի եւ Վարդավառի տաւնին եւ աղ աւրհնելոյ:

2 V Վարդավառին: — 6 S Եթէ — սրբութեանցն չունի: — 7 V Յակոբոս: — W արեւ V յարիայ: — 9 V չեւ եւս: — V քահանայութիւնս: — 11 W փոխեալ զըհինն: — 16 V քահանայիցն զՔրիստոսի քահանայութիւնս. եւ այնպէս հ. ա. ի Հոգւոյն սրբոյ առաքելոցն ի նոր տաւնիս առնուլ: — 17 W աղեցցին: V յաղեցին: — V աղիւն աւրհնութեան: — 19 V զուրբ հոգին: — 20 V ընդ ամենայն զոհս: — 21 V աւրհնութեան մատուցի եւ խառնեցի յընծայս: W յընծայ: — 22 V քրիստոս մարմին: — 23 V բնութիւն աղին: — 24 V ի մեզ: — 25 W ի անբնեւորի: V որ է: — V չունի Եթէ... եւ Եթէ: — 26 W (ե)թէ... (եւ) Եթէ մեղաց մ(երոց) անբնեւորի: S շարունակութիւնը մինչեւ Արդ յառաջ չէ բերած:

⁸ Գրքը Հարցմանց, Կ. Պոլիս 1729, էջ 659:
⁹ Հմմտ. Հ. Ե. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթ. Մատենադարանին Վիեննայ. Վիեննա 1895, էջ
¹⁰ Հմմտ. Հ. Բ. Սարգիսեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Վենետիկի Մխիթ. Մատ. Բ. էջ 1135:
¹¹ Անդ, էջ 391:
¹² Տ. Մաւառանեան, Յուցակ ձեռագրաց Ս. Թաւրեանց Մատենադարանի (ձեռագիր):
¹³ Մատենադարան, Վենետիկ 1889, էջ 618:

ձենալ եւ խածանել զմեզ, ոչ կարացեալ խայտառակեացի յաղէ լուսոյն եւ մի կարացեց ռւտել զհրամայեալս ի Բրիստոս, որպէս
 30 եկեր ի հնունս :

Արդ զայս ասաց սուրբն Յոստոս, որ ազանատես եւ սպասաւոր էր սուրբ առաքելոցն, երրորդ յաջորդեալ ի Յակովբայ եւ ի Շմաւոնէ զեպիսկոպոստեթիւնն. եթէ
 35 Յակովբոս եղբայր Տեառն եւ առաքեալքն կանգնեցին սեղան յաւուր Վարդաւառի տանին, զի ցայն վայր չեւ եւս էր քրիստոսական մարմինն պատարագեալ ի վերայ սեղանոյն: Արդ եղբայրն Տեառն հրաման աւ
 40 սեալ ի Հոգւոյն սրբոյ մատուցանել զպատարագն

27 W յորժամ կ(ամեացի աւձ)ն մեր(ձենալ եւ խած)անել զմեզ անընթեռնիլի: — 28 W (խ)այտառակ(եացի յաղէ լ)ուսոյն եւ մի անընթեռնիլի: — 31 V սուրբ չունի: — 33 V եւ (երկրորդ): WV երկրորդ: — 35 V զեպիսկոպոստեթիւնն... Յակոբոս. չիք եղբայր Տեառն: — 37 W չէր V չեւ եւս էր: — 39 V սեղանոյ:

րագն Բրիստոսի: Յայնժամ տեսին ասաքեալքն ազանակերպ իջմամբ զՀոգին սուրբ ի վերայ նորա: Զի ի Վարդաւառի տանին մատուցաւ պատարագ զառաջինն. եւ այն
 45 աւր եղեւ սկիզբն ուխտից եւ պատարագաց եւ սրբոյ սեղանոյ Տեառն եւ Աղ աւրհնելոյ, որպէս Բրիստոս ցաշակերտոսն ասէր: Գուք էք աղ երկրի: Գանդի Բրիստոս աւրհնէ զազն բերանով քահանային եւ Հոգին սուրբ. ասէ
 50 Յովհան Ոսկեբերան, եթէ ի պատարագն եւ յաղն եւ յամենայն ընծայսն առ հասարակ իջանելով սուրբ Հոգին՝ սրբէ զպատարագն ի ձեռն քահանային:

Եւ մեր ընկալեալ հաւատով փառս ի վեր առաքեսցուք Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն 55 սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:

41 V Բրիստոս W յայն ժ(ամ) անընթեռնիլի: — 42 V.ա. Տեառն W ըզհոգի: — 44 V չիք զառաջինն: — 45 V տօնից եւ ուխտից: — 47 V որպէս եւ ասէ... չիք ասէր: — 49 V եւ ասէ երանելին եթէ: — 51 W ընծայսն: — 54 V հաւատովք V վերապարտեցուք:

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր
 (Ուղարկուած յամբազորութեանս):

Աբիյր Տիգրան, Մեր Կառավարութիւնն: Հաւաքեց եւ պատրաստեց — —: Նիւ Եորք, տպ. Կոչնակ, 1930, 80, էջ 96:
 Աեալ Գուրգէն, Հայոց լեզուի զարգացման Սովետական փուլը: Հրատ. ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի: Երևան 1946, 80, էջ 36: Գինն՝ 3 Ռ.:
 Սօֆեան վահրամ, Նոր Գարուն: Նիւ Եորք, տպ. Տելֆիկ, 1946, 80 մեծ, էջ 111: Գինն՝ 3 տոլար:
 Վալարեան վ., Աւետեաց երկիրը, վէպ: Պէյրուս, տպ. Շնորհօքեան եւ Մասիս, 1946, 8, էջ 352: Գինն՝ 10 լիբ. ոսկի:
 Վահէ-Վահեան, Ոսկի կամուրջ. քերթութուածներ (1933—1945): Պէյրուս, տպ. Ռոթոս, 1946, 80 մեծ, էջ 135:
 Վարժապետեան Յովհաննէս, Ուղեցոյց Մարսէյի, Guide de Marseille, Ժ. Տարեի, 1938: Փարիզ, տպ. Artistique, 80, էջ 50:
 Վարուժան Գ., Հեթանոս երգեր — Հայն երգը (Հատուածներ) Վենետիկ 1944, 80, էջ 86 [Գրական ցուբեր, Թ. 6]:
 — Մարտուններ — Յեղին սիրաբ (Հատուածներ) Վենետիկ 1944, 80, էջ 132 [Գրական ցուբեր Թ. 5]:
 Վերանորոգում. անհրաժեշտութիւն, նպատակ, միջոցներ: Սոփիա, տպ. Ռահվի-

րայ, 1940, 80, էջ 64: [Գրադարան «Ռազմիկ», Թ. 1]
 Վիեննական Միթիթարեան Վարժարան ի Պլովդիւ 1928—1938: Պլովդիւ, տպ. Սիւիան, 1938, 80, էջ 31:
 Վրացեան Ս., Հայրենիք Տարեգիրք, Տօնացոյց 1947, Ե. Տարեի, Հրատ. «Հայրենիք»ի, Պոսթըն, տպ. Հայրենիք, 1947, 80, էջ 366: Գինն թղթակազմ՝ 1.50 տոլար, լրթակազմ՝ 2.50 տոլար:
 Տէր Միլասեան Ե., Ոսկեղարի Հայ Գրականութիւնը: Հրատ. ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի: Երևան 1946, 80, էջ 56: Գինն՝ 4 Ռ.:
 Տէրունեան Սմբատ, Մինչեւ Վերադարձ. Բերթուածներ (1943—1945) Կիպրոս, տպ. Մոտիչեան, Լաոնաթա, 1946, 80, էջ 104: Գինն՝ 5 շիլին: Sempad Döevletian, P. O Box 413, Nicosia, Cyprus
 Տէր-Մովսիսեան Մեսրոպ Մագիստրոս Արքեպ., Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1938, 40, էջ է + 152:
 Տէօվլէր Գ., Զէյթունցիք: Փարիզ, տպ. Ա. Տէր-Յակոբեան, 1943, 80, էջ 32: Գինն՝ 30 Ֆր.:

